# ԱՆԻ ԳԵՎՈՐԳԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ես՝ Անի Գևորգի Սարգսյանս, ծնվել եմ 1989 թվականի հունվարի 01-ին, Երևան քաղաքում: Ազգությամբ հայ եմ և Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

1995-2005 թվականներին սովորել և գերազանցությամբ ավարտել եմ Երևանի Վ.Վարդևանյանի անվան թիվ 173 միջնակարգ դպրոցը:

2005-2009 թվականներին սովորել և գերազանցությամբ ավարտել եմ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ ստանալով իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան:

2009-2011 թվականներին սովորել և գերազանցությամբ ավարտել եմ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի մագիստրատուրան՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան:

Միաժամանակ՝ 2009-2011 թվականներին, սովորել և ավարտել եմ նաև ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավունքի ամբիոնի մագիստրատուրան:

2011-2014 թվականներին սովորել և ավարտել եմ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտուրան, իսկ 2015 թվականի սեպտեմբերի 30-ին շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ «Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման արդի հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության պաշտպանության արդյունքում:

2016 թվականին ավարտել եմ Գերմանիայի Բեռլին քաղաքում «GIZ» (Գերմանիայի տեխնիկական համագործակցություն ընկերության) կողմից կազմակերպված տարածաշրջանային ակադեմիան՝ «The Regional Academy - Transformation Lawyers - Legal Dialogue for Legal Transformation»:

2011 թվականի մարտից աշխատել եմ ՀՀ դատական համակարգում, մասնավորապես՝ մարտից հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում ՀՀ դատական դեպարտամենտում՝ որպես անձնակազմի կառավարման վարչության կրտսեր մասնագետ, ապա՝ մասնագետ: 2011 թվականի հոկտեմբերից մինչ 2015 թվականի հունվարն ընկած ժամանակահատվածում՝ որպես կազմակերպաիրավական վարչության մասնագետ, ապա՝ ավագ մասնագետ:

2015 թվականի հունվարից դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում հանդիսացել եմ ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության ավագ մասնագետ:

2015 թվականի հունվարից մարտն ընկած ժամանակահատվածում աշխատել եմ «Լեգեքս Գրուպ» ՍՊ ընկերությունում՝ որպես իրավախորհրդատու:

2016 թվականի մարտից նոյեմբերն ընկած ժամանակահատվածում աշխատել եմ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչի պաշտոնում:

2016 թվականի նոյեմբերից մինչ 2018 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում զբաղեցրել եմ ՀՀ քննչական կոմիտեի քրեական գործերի քննության աջակցության վարչության ավագ քննիչի, իսկ 2018 թվականի մայիսից մինչ 2019 թվականի սեպտեմբեր ամիսը՝ ՀԿԳ քննիչի պաշտոնները:

2019 թվականի սեպտեմբերից մինչ 2020 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում հանդիսացել եմ ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարությունների, կազմակերպական-վերլուծական և քրեագիտական գլխավոր վարչության քրեագիտական վարչության ՀԿԳ քննիչ:

2020 թվականի սեպտեմբերի 03-ից մինչ օրս զբաղեցնում եմ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության ավագ դատախազի պաշտոնը:

Միևնույն ժամանակ, 2012 թվականի հոկտեմբերից առ այսօր դասավանդում եմ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի Սահմանադրական և մունիցիպալ իրավունքի (ներկայումս՝ Իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի) ամբիոնում՝ ներկայումս «Սահմանադրական արդարադատություն», «Սահմանադրական իրավունք», «Իրավունքի տեսություն» և «Իրավաբանական էթիկա» ուսումնական առարկաները:

Դասավանդել եմ նաև այլ ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ Արդարադատության ակադեմիայում, ՀՀ պետական կառավարման ակադեմիայում և այլն:

Վերապատրաստման ծրագրերի, աշխատանքային և ուսումնական այցերի եմ մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ մի շարք այլ երկրներում, այդ թվում՝ Շվեյցարիայում, Գերմանիայում, Իտալիայում, Ավստրիայում, Վրաստանում, Հունգարիայում:

Ունեմ արդարադատության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան և իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Երկու մենագրության և երկու տասնյակից ավելի գիտական հոդվածների հեղինակ/համահեղինակ եմ:

Ունեմ մեկ դուստր: